Մեթոդական միավորման ուսումնադաստիարակչական աշխատանքների 2023-2024 ուսումնական տարվա պլան-ծրագիրն ըստ ամիսների՝

Սեպտեմբեր

- 2023-2024 ուս. տարվա մեր խնդիրները և դրանք լուծելու ուղիների ընտրությունը:
- Քննարկել և որոշել հայոց լեզվի և գրականության, պատմության մեթոդ միավորման աշխատանքային պլանները, թեմատիկ աշխատանքների քանակը:
- Ստուգել հանձնախմբի բոլոր անդամների թեմատիկ պլանները:
- 2023-2024 ուս. տարվա դպրոցական բաղադրիչից տրված ժամաքանակի բաշխման և դասաժամերի բաշխման ներկայացում:
- Աջակցող մանկավարժահոգեբանական թիմի հետ անցկացնել ԿԱՊԿՈՒ աշակերտների դիտարկում:

Հոկտեմբեր

- Ուսուցչի օրվան նվիրված միջոցառում:
- Աջակցող մանկավարժահոգեբանական թիմի հետ միասին անցկացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների դիտարկում և նրանց հոգեբանական զարգացման առանձնահատկությունների գնահատում:
- Անցկացնել ստեղծագործական բնույթի շարադրություններ 8-րդ դասարանում, արդյունքները քննարկել մ/մ հերթական նիստի ժամանակ:
- Մայրենիի դրվածքը 6-րդ դասարանում:
- Դասապրոցեսի ընթացքում հետ մնացող աշակերտների հետ տարվող աշխատանքների ուսումնասիրություն և քննարկում, անելիքների ճշգրտում:

Նոյեմբեր

- Էքսկուրսիա պատմամշակութային որևէ օջախ (9-12-րդ դաս.) դրանք ծառայեցնելով հայ մարդու հայեցի դաստիարակության գործին:
- Մասնախմբի նիստի ժամանակ կազմակերպել մեթոդական զեկույց սկսնակ ուսուցիչների համար:

- Կազմակկերպել դասալսումներ հայոց լեզու և պատմություն առարկաներից փորձի փոխանակման նպատակով։
- Օլիմպիադայի 1-ին փուլի նախապատրաստում

Դեկտեմբեր

- Կազմակերպել գրական որևէ ստեղծագործության հիման վրա նկարահանված ֆիլմի դիտում 9-12-րդ դասարաններում։
- Ներկայացնել ԿԱՊԿՈՒ աշակերտների ձեռքբերումները և առաջացած խնդիրները։
- Օլիմպիադայի դպրոցական փուլի անցկացում և առաջադիմության վերլուծություն։
- Կազմակերպել գրավոր աշխատանքներ հայոց լեզու առարկայից

5-րդ դասարանում (թելադրություն),

7-րդ դասարանում (թելադրություն),
8-րդ դասարաններում (հայոց լեզու),
9-րդ դասարանում (հայոց լեզու)։

Հունվար

- Հետարձակուրդային սթրեսների հաղթահարում, զեկույց հոգեբանի կողմից։
- Առաջին կիսամյակից հետո կազմակերպել կիսամյակային արդյունքների մանրամասն քննարկում, վերլուծում և թերությունների վերհանում, թերությունները վերանայելու նպատակով հանձնարարականների ընդունում։
- Օլիպիադայի տարածքային փուլի անցկացում։
- Հայոց բանակին նվիրված միջոցառում։

Փետրվար

- Կազմակերպել զեկույց գրադարանավարի կողմից գրքի կարևորության մասին։

- Կազմակերպել ընթերցանության մրցույթ մայրենիից 5-6 րդ դասարաններում:
- <<Գրքի տոն >> խորագրով միջոցառում:
- Ազգային տոներին նվիրված միջոցառում:
- Հայոց լեզու և գրականության դրվածքը 6-րդ և 8-րդ դասարաններում:

Մարտ

- Կանանց միջազգային օրվան նվիրված երաժշտական ներկայացում:
- Պատմություն առարկայի դրվածքի ուսումնասիրում 8-րդ դասարանում:
- Քննական դասարաններում աշակերտների հետ տարվող աշխատանքի ուսումնասիրություն,քննարկում և անելիքների ճշգրտում:
- ՆԶՊ ի դրվածքը ավագ դպրոցում:

Ապրիլ

- Մայրության օրվան նվիրված միջոցառում:
- Պատմության ամենասև էջերին նվիրված հիշատակի օր:
- Կազմակերպել դասալսում 10-րդ և 11-րդ դասարաններում Ծ. Դավթյանի մոտ մանկավարժական փորձի փոխանակման նպատակով
- 9-րդ և 12-րդ դասարաններում անցկացվելիք քննության նախապատրաստական աշխատանքների իրականացում և արդյունքների ամփոփում:

Մայիս

- Թեմատիկ և գործնական աշխատանքների քանակի ստուգում:

- Թեմատիկ և գործնական աշխատանքների կազմակերպման վերահսկում մ/մ անդամների մոտ։
- Հանրապետության տոնին նվիրված միջոցառումների շարք (ցուցահանդես, բանավեճ. . .)

Հունիս

- 2023-2024 ուս. տարվա աշխատանքների ամփոփում, մ/մ աշխատանքների թույլ և ուժեղ կողմերի գնահատում։
- Կոնսուլտացիաների և քննությունների կազմակերպում և անցկացում։ Հետքննական արդյունքների ամփոփում։
- Նախնական դասաբաշխման առաջարկությունների բաղադրիչների խնդիրը։